



Հաստատում եմ՝

Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ռեկտոր
պրոֆեսոր Ս.Ռ. Գևորգյան

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Թարջումանյան Սիլվի Վահեի «Ինքնիրացման գործընթացի հոգեբանական նախադրյալները ծնողական դեպրիվացիայի պայմաններում» ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Թարջումանյան Սիլվի Վահեի «Ինքնիրացման գործընթացի հոգեբանական նախադրյալները ծնողական դեպրիվացիայի պայմաններում» խորագրով ատենախոսությունը քննարկվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի նիստում (29.04.2024, արձանագրություն N 9): Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչի պ/կ, հ.գ.թ., դոցենտ Լ.Կ. Սարգսյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Մ.Պ. Մկրտումյանը, հ.գ.թ., դոցենտ Լ.Լ. Լաչինյանը, ք.գ.թ., դոցենտ Գ.Կ. Գրիգորյանը, հ.գ.թ., դոցենտ Ա.Չ. Ղազարյանը, հ.գ.թ., դոցենտ Ա.Ռ. Ֆիրյանը, հ.գ.թ. Ա.Ս. Կաթունյանը, հ.գ.թ. Ա.Ս. Խուրդյանը, հ.գ.թ. Ա.Ս. Ավագյանը, հ.գ.թ. Ռ.Ս. Ժամկոցյանը, դասախոս Ա.Ս. Մուրադյանը:

Մարդկության զարգացման ներկա փուլում, երբ զլոբալիզացիոն գործընթացների համատեքստում սոցիալական ինստիտուտների գործունեությունը նպաստում է մարդու իրավունքների ընդլայնմանը, անձի սոցիալ-հոգեբանական անկախացմանը, հարատև կրթության պայմաններին՝ անձի համար ինքնիրացման միջավայր և նոր հնարավորություններ ստեղծելով ապագայի կառուցման գործում, ինքնիրացման

վերաբերյալ հետազոտությունները դառնում է պահանջված և արդիական: Թեպետ անձի ինքնիրացման գործընթացի վերաբերյալ առկա են բազմաթիվ ուսումնասիրություններ, այնուամենայնիվ դեռևս շատ ու շատ հարցեր կարոտ են լուսաբանման ու նորովի մեկնաբանման՝ կապված հասարակական կյանքի արագընթաց տեմպի, հանրության ինտեգրացիոն ու զլոբալիզացիոն տարաբնույթ գործընթացների, տարատեսակ նորագոյացությունների հանրային կյանք փոխներթափանցումների հետ, որոնց արդյունքում, մարդկության զարգացման մի շարք կողմերի հետ զուգընթաց նաև փոփոխությունների, աղճատումների ու հաճախ նաև աղավաղումների է ենթարկվում անձի զարգացման ոլորտները: Եվ, եթե ինքնիրացման գործընթացին բնորոշ դժվարություններին հավելենք նաև ծնողական դեպրիվացիայի ազդեցությունները՝ ապա պատկերն առավել ակնառու է դառնում: Հարկ է նշել նաև, որ բավականաչափ թույլ է ուսումնասիրված հասուն անձի ինքնիրացման գործընթացի վրա ծնողական դեպրիվացիայի ազդեցությունները:

Նման իրավիճակում հոգեբանական հետազոտության առաջնահերթ խնդիրներից է վերլուծել, իմաստավորել ու գնահատել առաջադրված խնդրի հոգեբանական առանձնահատկությունները, վեր հանել ինքնիրացման գործընթացի հոգեբանական նախադրյալները ծնողական դեպրիվացիայի առկայության պայմաններում, գտնել համապարփակ և արդյունավետ հաղթահարման մեխանիզմներ, նախականխման և բացասական պոտենցյալի մարման ուղիներ:

Ատենախոսական աշխատանքում իրականացվել է ինքնիրացման գործընթացի հոգեբանական նախադրյալների ուսումնասիրություն մանկական տարիքում ծնողական դեպրիվացիա ունեցող անձանց շրջանում, ինչը բացահայտել է նրանց մոտ ինքնիրացման հոգեբանական նախադրյալները՝ սեփական կյանքի իմաստավորման, նպատակադրման (կենսաիմաստային կողմնորոշումների) և ինքնավերաբերմունքի փոխկապակցվածության համատեքստում: Դա ընդլայնում և հարստացնում է անձի ինքնիրացման գործընթացի մասին պատկերացումները և իր ներդրումն է ունենում առկա տեսական հիմքերի ամբողջականացման գործում, քանի որ ատենախոսական աշխատանքում ծնողական դեպրիվացիան չի դիտարկվում է որպես անձի ինքնիրացման գործընթացը խոչընդոտող գործոն: Սա հիմքեր է ստեղծում հիմնախնդրի

ավելի մանրամասն ուսումնասիրության համար: Այս տեսանկյունից հետազոտվող հիմնախնդիրը արդիական է, նպատակային:

Աշխատանքում առաջադրված է հետազոտությամբ հիմնավորված նորություն այն մասին, որ ինքնիրացման գործընթացը հասուն տարիքում խիստ կերպով չէ, որ կապված է վաղ շրջանի ծնողական դեպրիվացիայի հետ: Սույն հետազոտության արդյունքները հաստատում են, որ կարող է ինքնիրացման բարեհաջող ընթացք լինել նաև ծնողական դեպրիվացիա ունեցողների շրջանում՝ հաճախ չզիջելով դեպրիվացիա չունեցող անձանց: Ինչպես նաև ատենախոսի կողմից փորձ է արվել բացահայտել ինքնիրացման գործընթացի այն նախադրյալները, որոնք ապահովում են ինքնիրացման հավասար հնարավորություններ ինչպես ծնողական դեպրիվացիա չունեցողների, այնպես էլ ծնողական դեպրիվացիայով անձանց համար:

Իրականացված հետազոտության արդյունքներն ատենախոսի կողմից ներդրվել են հոգեթերապևտիկ մարտավարությունների կատարելագործման համար, որոնք առավել արդյունավետ են ծնողական դեպրիվացիա ունեցող անձանց հետ աշխատանքում:

Հետազոտական աշխատանքի նպատակից ելնելով առաջադրված է 5 խնդիրներ, որոնք լուծված են աշխատանքում: Դրանք վերաբերում են ծնողական դեպրիվացիայի դրսևորման և ինքնիրացման գործընթացի հատկանիշների հոգեբանական տեսամեթոդական վերլուծությանը, ինքնիրացման գործընթացի և ծնողական դեպրիվացիայի միջև փոխադարձ կապերի բացահայտմանը, ծնողական դեպրիվացիա ունեցող և ծնողական դեպրիվացիա չունեցող անձանց ինքնիրացման հոգեբանական բաղադրիչների դրսևորման տարբերությունների բացահայտմանը, դեպրիվացված անձանց ինքնիրացման հոգեբանական նախադրյալների պարզաբանմանը՝ սեփական կյանքի իմաստավորման, նպատակադրման և ինքնավերաբերմունքի փոխկապակցվածության համատեքստում, ինչպես նաև ինքնիրացման գործընթացը ապահովող հոգեբանական բաղադրիչների բացահայտմանը: Ատենախոսական աշխատանքում առաջադրված վարկածը ապացուցվում է:

Ատենախոսն առաջադրում է պաշտպանությանը ներկայացվող հետևյալ դրույթները, ըստ որի անձի ինքնիրացումը կարելի է դիտարկել որպես ծնողական դեպրիվացիայից հարաբերականորեն անկախ գործընթաց, քանի որ ծնողական

դեպրիվացիայի առկայության հանգամանքը չի պարտադրում անձի ինքնիրացման ձախողում: Գոյություն ունեն հոգեբանական նախադրյալներ, որոնք ինքնիրացվելու հավասար հնարավորություններ են ընձեռում ծնողական դեպրիվացիայով և առանց ծնողական դեպրիվացիայի անձանց համար: Հոգեբանական այդ նախադրյալներն են՝ կյանքի նպատակները, կյանքի իմաստը և ինքնավերաբերմունքը և դրանց արտահայտվածության տարբերությունները դրսևորվում են հիմնականում կենսաժամանակային ուղղվածության, արժեքային կողմնորոշումների և ինքնահամակրանքի հատկանիշներով: Ինչպես նաև ինքնիրացման գործընթացի հատկանիշները հնարավորություն են տալիս անձանց բարելավելու ինքնիրացման ցուցանիշները՝ անկախ նրանից, թե նրանք ունեցել են արդյոք ծնողական դեպրիվացիա, թե ոչ:

Ատենախոսական աշխատանքում հետազոտության համակազմում ընդգրկվել են մինչև 10 տարեկան հասակը ծնողական դեպրիվացիա ունեցած անձինք, իսկ ինքնիրացման հոգեբանական բաղադրիչների դրսևորման տարբերությունները բացահայտելու համար ատենախոսի կողմից ընտրվել են նույն տարիքային միջակայքում գտնվող, սակայն մանկական տարիքում ծնողական դեպրիվացիա չունեցած անձանցից կազմված խումբ:

Հետազոտության անցկացման համար աշխատանքում ընտրվել են Ն. Կալինայի և Ա. Լազուկինայի «Անձի ինքնիրացման ախտորոշում» թեստը, կենսափնաստային կողմնորոշումների վերհանման և նպատակների առկայության բացահայտման համար Դ. Լեոնտևի «Կենսափնաստային կողմնորոշումներ» թեստը, ինքնագնահատականի չափման համար ընտրվել է Տ. Դեմբոյի և Ս. Ռուբինշտեյնի «Ինքնագնահատման սանդղակ» թեստը և սթրեսի մակարդակը և պատասխանների առժանահավատությունը ստուգելու համար՝ «Դեյթոյի սթրեսի թեստ»-ը:

Ատենախոսական աշխատանքն ընդգրկում է ներածական, հիմնական և ամփոփիչ հատվածներ: Հիմնական հատվածը կազմված է երեք գլուխներից, որոնցից առաջին գլխում քննարկվում են ծնողական դեպրիվացիայի վերաբերյալ հիմնական տեսությունները և մոտեցումները, ծնողական դեպրիվացիայի առաջացման պայմանները և ծնողական դեպրիվացիայի հետևանքները: Երկրորդ գլխում

ներկայացված են իքնիրացման սահմանումները և հիմնական տեսական մոտեցումները և անձի իքնիրացման գործընթացի սխեման: Երրորդ գլխում նկարագրված են հետազոտական գործընթացը և տվյալների վերլուծությունն ընդգրկող հատվածները: Աշխատանքն ավարտվում է եզրակացություններով:

Աշխատանքի թեման ներկայացված է հեղինակի կողմից 7 գիտական հոդվածներում:

Աշխատանքն ամբողջական է իր տրամաբանության և շարադրանքի մեջ ընտրված մեթոդակազմը և վերլուծության մեթոդները համապատասխանում են առաջ քաշված խնդիրներին, վարկածին, իսկ պաշտպանությանը ներկայացվող դրույթները բխում են եզրակացություններից:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է հիմնական դրույթները:

Բարձր գնահատելով ատենախոսական աշխատանքը՝ ունենք նաև որոշ դիտարկումներ և դիտողություններ:

1. Միակողմանի և երկկողմանի ծնողագուրկ անձանց հոգեբանական առանձնահատկությունները տարբեր են, հետևաբար ծնողական դեպրիվացիայի ազդեցությունը նրանց հոգեկան զարգացման վրա տարբեր է: Ատենախոսական աշխատանքում տարբերակում չի դրվել միակողմանի և երկկողմանի ծնողագուրկ անձանց միջև: Նրանք ընդգրկել են մեկ խմբում և արդյունքները չեն երթարկվել առանձին վերլուծության:

2. Ատենախոսության 3-րդ գլխում նշված է, որ հետազոտության մեջ օգտագործված հարցաթերթիկը կազմված է ծնողական դեպրիվացիայի տեսությունների մեթոդաբանությամբ ընդունված չափանիշներին համահունչ, սակայն նշված չեն տեսությունների հեղինակները:

3. Դեպրիվացված անձի արժեքների սանդղակով ստացված արդյունքներն ավելի ցածր են քան ծնողական դեպրիվացիա չունեցողներինը: Մեթոդիկայում նշվում է՝ արժեքների սանդղակի բարձր արդյունքները ցույց են տալիս, որ անձը կիսում է իքնիրացվող անհատականության արժեքները, որոնց թվում Ա. Մասլոուն ներառում է՝ ճշմարտությունը, բարությունը, գեղեցկությունը: Սակայն մեկնաբանության մեջ

ատենախոսը բացատրում է արժեքների ցածր մակարդակը, որպես սոցիալ-
հոգեբանական ապահարմարում և չի անդրադառնում վերը նշված հատկանիշներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թարջումանյան Սիլվի Վահեի «Ինքնիրացման գործընթացի հոգեբանական
նախադրյալները ծնողական դեպրիվացիայի պայմաններում» ԺԹ.00.01 «Ընդհանուր
հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն»
մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսությունն ինքնուրույն և ավարտուն աշխատանք է, որն ունի
տեսական և կիրառական նշանակություն: Ատենախոսությունը համապատասխանում
է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ
Սիլվի Վահեի Թարջումանյանն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն,
հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն»
մասնագիտությամբ:

Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ Ակադեմիկոս

Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության
ամբիոնի վարիչի պ/կ, հ.գ.թ., դոցենտ


Լ.Գ. Սարգսյան

Նիստի քարտուղար

Լ.Ա. Բաբախանյան

Ամբիոնի վարիչ Լ. Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի գիտական քարտուղար



Ս.Ս. Բապիրյան